ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ»ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՄ ԱՐՄԵՆ ՔՈՉԱՐՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Քոչարյան,

ի պատասխան Ձեր 13.09.2024թ. հ.273-2024թ. գրության՝ տեղեկացվում է.

01.01.2024-31.08.2024թթ. ընկած ժամանակահատվածում Երևանի քաղաքապետարանի՝ Ա գոտու համար նախատեսված ավտոկայանատեղի վճարի եկամտային հաշվեհամարին փոխանցվել է շուրջ 1,145,432,7 հազ. ՀՀ դրամ գումար, իսկ Բ գոտու համար նախատեսված ավտոկայանատեղի վճարի եկամտային հաշվեհամարին փոխանցվել է՝ շուրջ 393,823,4 հազ. ՀՀ դրամ գումար:

Միաժամանակ, Երևան համայնքի բյուջե մուտքագրվող ավտոկայանատեղի համար վճարված գումարների բաշխման վերաբերյալ, տեղեկացվում է, որ հաշվի առնելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի՝ «Բյուջետային ելքերի ամբողջական (համախառն) ծածկվածության սկզբունքը», որը նշանակում է, որ բյուջեի բոլոր ելքերը պետք է ծածկվեն բյուջեի մուտքերով: Մուտքերը չեն կարող կապվածություն ունենալ որոշակի ելքերի հետ, բացառությամբ նպատակային բյուջետային մուտքերի ստացման դեպքերի, կամ օրենսդրությամբ նպատակային բյուջետային ֆոնդերի ստեղծման դեպքում՝ դրանց մուտքերի: Ուստի՝ ավտոկայանատեղի համար վճարված գումարների բաշխումը հնարավոր չէ կապել որոշակի ծախսային ուղղությունների հետ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ